**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

ՀՀ Լոռու մարզ գ. Արևաշող 1 Փ. 105, Հեռ. 0255-2-21-76

N ԼՄԱՀ 0038
*26 փետրվար 2019թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մարզպետ
Անդրեյ Ղուկասյանին

Հարգելի պարոն Ա. Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 - րդ հոդվածի 4 - րդ կետի 9) - րդ ենթակետով կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի թիվ 6 որոշումը:

Առդիր՝ 1 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Սեվադա Սահակյան*
*0255-2-21-76*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*20 փետրվարի 2019թ.* **Թիվ 6**

# ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 23.01.2019թ. թիվ 01/107.4/00372-2019 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների» պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:
3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արևաշող համայնքի ղեկավարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված.
Արևաշող համայնքի ղեկավարի
20 փետրվարի 2019թ
թիվ 6 որոշման

# Պ Լ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **I ԱԻՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 1.1 | ՀՀ վարչապետի 2014թ. սեպտեմբերի 26-ի N 934-Ն որոշման համաձայն՝<br>Մասնակցություն Լոռու մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության, մշակման և ճշգրտման, ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | հուլիս | Համայնքի ղեկավար | Համայնքի ՔՊ ղեկավար կազմ, տարահանման հանձնաժողով | | |
| 1.2 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպա- | Տարվա ընթացքում | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | նության միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի տարածքում հաշվառված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը | | | | | |
| **II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **2. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 2.1 | «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Սարալանջ համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ | մինչև 25.12 | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ______________________ ՍԵՎԱԴԱ ՍԱՀԱԿՅԱՆ

ստորագրություն, անուն, ազգանուն